Empowered lives.

Resilient nations.

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ Ք. ՔԱՋԱՐԱՆ, ԼԵՌՆԱՁՈՐ, ԳԵՂԻ, ՇԻԿԱՀՈՂ, ՍՐԱՇԵՆ ԵՎ ԾԱՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԱՅԼ ԿՈՂՄԵՐԻ ՀԱՄԱՐ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

<<Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի զարգացում>> ՄԱԶԾ/ԳԷՀ միջին ծավալի ծրագրի շրջանակներում բնության հատուկ պահպանվող տարածքների վերաբերյալ ՀՀ Սյունիքի մարզի ք.Քաջարան, Լեռնաձոր, Գեղի, Շիկահող, Սրաշեն և Ծավ համայնքների քաղաքապետարանի և գյուղապետարանների աշխատակազմի և ավագանու անդամների գիտելիքների ու կարիքների գնահատման արդյունքների հիման վրա 2012 թ. ապրիլի 16-17-ին (Շիկահող, Սրաշեն և Ծավ համայնքներ) և 19-20-ին (ք.Քաջարան, Լեռնաձոր և Գեղի համայնքներ) ՀՀ բնապահպանության նախարարության <<Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի կողմից կազմակերպվել և իրականացվել են ուսումնական դասընթացներ:

<u>Դասընթացների կազմակերպումը.</u> Դասընթացներն արդյունավետ իրականացնելու նպատակով կատարվել են հետևյալ գործողությունները.

1. Ք.Քաջարան, Լեռնաձոր, Գեղի, Շիկահող, Սրաշեն և Ծավ համայնքների քաղաքապետարանի և գյուղապետարանների աշխատակազմի և ավագանու անդամների գիտելիքների ու կարիքների գնահատման արդյունքների հիման վրա մշակված դասընթացների թեմաներին համապատասխան որոշվել է դասախոսների հետևյալ կազմը՝

   Ալիկ Մաթևոսյան, <<Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի իրավաբան – թեման՝ ***<<ՀՀ բնապահպանական օրենսդրությունը>>.***

   Սամվել Բալոյան, <<Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի տնօրենի տեղակալ – թեմաները՝***<<Բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման պլանների մշակման սկզբունքները>> և <<Հայաստանի բույսերի և կենդանիների Կարմիր գրքերը>>.***

   Էդիկ Ոսկանյան, <<Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի դոնորների օժանդակությամբ իրականացվող ծրագրերի բաժնի պետ – թեման՝ ***<<ԲՀՊՏ-ներում մոնիթորինգի և կադաստրի վարման մեթոդաբանությունը>>.***

Ռուբիկ Շահազիզյան, <<Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի բյուջետային ծրագրերի իրականացման բաժնի պետ – թեման՝ ***<<Էկոզբոսաշրջությունը ԲՀՊՏ-ներում>>.***

Գևորգ Միրզոյան, <<Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի էկոկրթական ծրագրերի բաժնի մասնագետ – թեմաները՝ ***<<Բնական պաշարների կառավարման և պահպանության բնագավառում Հայաստանի գործողությունների ազգային ծրագրերը>>***, ***<<Էկոլոգիական իրազեկման մեթոդական հիմունքները>>:***

2. Դասախոսները սահմանված ժամկետներում կազմել են դասախոսությունների տեքստերը, համակարգիչային PowerPoint ծրագրով պատրաստել թեմաների ներկայացումը և դասընթացների մասնակիցներին տրամադրվող նյութերի տպագիր տարբերակները՝ դրանք բազմացնելով դասընթացների մասնակիցների քանակին համապատասխան.
3. Յուրաքանչյուր համայնքի ղեկավարին ներկայացվել են քաղաքապետարանի և գյուղապետարանների աշխատակազմի և ավագանու անդամների շրջանակներում կատարված գիտելիքների և կարիքների գնահատման արդյունքները.
4. Յուրաքանչյուր համայնքի ղեկավարի հետ քննարկվել և համաձայնեցվել է դասընթացների անցկացման վայրը (<<Շիկահող>> պետական արգելոց>> ՊՈԱԿ և ք.Քաջարանի <<Լեռնագործների արարողատուն>> ՍՊԸ) և ժամանակացույցը ***(Հավելված 1)***: Ճշգրտվել են դասընթացների մասնակիցների ցանկը և ճշգրտված ցանկերը համայնքների ղեկավարների կողմից պաշտոնապես ներկայացվել են <<Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկ ***(Հավելված 2)***.
5. <<Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկը ՀՀ Սյունիքի մարզպետին պաշտոնապես տեղեկացրել է դասընթացների կազմակերպման և իրականացման ժամանակացույցի ու թեմատիկայի վերաբերյալ.
6. <<Շիկահող>> պետական արգելոց>> ՊՈԱԿ-ի և ք.Քաջարանի <<Լեռնագործների արարողատուն>> ՍՊԸ-ի ղեկավարության հետ կազմվել է ճաշացուցակ և հաշիվ-ապրանքագիր՝դասընթացների մասնակիցներին սննդով ապահովելու նպատակով.
7. Դասընթացների մասնակիցներին անհրաժեշտ գրենական պիտույքներով ապահովելու նպատակով <<Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկը, մասնակիցների քանակին համապատասխան, ձեռք է բերել թղթապանակներ, գրիչներ և բլոկնոտներ: Բացի այդ, միջոցներ են առանձնացվել դասընթացի մասնակիցներին օրապահիկ վճարելու համար՝ 1 օրվա համար 2000 դրամ:

<u>Դասընթացների իրականացումը.</u> Դասընթացներն իրականացվել են երկու փուլով՝

1. 2012 թ. ապրիլի 16-17-ին՝ Շիկահող, Սրաշեն և Ծավ համայնքների գյուղապետարանների աշխատակազմի, ավագանու անդամների և շահագրգիռ այլ կողմերի համար.

2. 2012 թ. ապրիլի 19-20-ին ք.Քաջարան, Լեռնաձոր և Գեղի համայնքների քաղաքապետարանի և գյուղապետարանների աշխատակազմի, ավագանու անդամների և շահագրգիռ այլ կողմերի համար:

Դասընթացներն իրականացվել են Ժամանակացույցին համապատասխան: Թեմատիկան մատուցվել է հանրամատչելի իրազեկման մակարդակով: Թեմաների մատուցման ժամանակ հնարավորինս տեղայնացվել է նյութը, որպեսզի այն առավելագույնս հետաքրքիր և ընկալելի լինի մասնակիցների համար: Յուրաքանչյուր թեմայի ներկայացումից հետո կազմակերպվել է մատուցված նյութի ամփոփում և համառոտ քննարկում, որի ընթացքում դասախոսները պատասխանել են մասնակիցներին հետաքրքրող հարցերին: Մասնակիցներին տրամադրվել են բոլոր թեմաների բովանդակության տպագիր օրինակները, իսկ քաղաքապետարանին և գյուղապետարաններին՝ դասընթացին վերաբերվող անհրաժեշտ գրականություն:

Ընդհանուր առմամբ դասընթացներին մասնակցել են 42 մարդ, որից՝

1. Համայնքի ղեկավար – 4
2. Համայնքի ղեկավարի տեղակալ - 2
3. Ավագանու անդամներ – 4
4. Ք.Քաջարանի քաղաքապետարանի անդամներ - 9
5. Գյուղապետարանի աշխատակազմի անդամներ – 9
6. Մանկավարժ – 9
7. Համայնքի բնակիչներ – 5:

Դասընթացի մասնակիցներից 20-ը տղամարդիկ էին, 22-ը՝ կանայք:

Դասընթացները լուսաբանող լուսանկարները կցվում են հաշվետվությանը:

<u>Դասընթացների գնահատումը.</u> Դասընթացի ավարտին մասնակիցներին տրամադրվել են գնահատման թերթիկներ: Լրացվել են 33 թերթիկներ, որոնց պատասխանները հետևյալն են՝

1. **Ինչպե՞ս եք գնահատում դասընթացները.**
   Լավ – 31
   Բավարար – 2
   Անբավարար - 0
2. **Դասընթացները օգտակա՞ր էին.**
   Այո – 32
   Ոչ – 0
   Մասնակի - 1
3. **Ո՞ր թեմաներն էին Ձեզ համար նորություն.**
   - Բոլոր թեմաները – 5.
   - Ոչ մեկը – 3.
   - ՀՀ բնապահպանական օրենսդրությունը – 7.
   - Բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման պլանների մշակման սկզբունքները – 3.

- Հայաստանի բույսերի և կենդանիների Կարմիր գրքերը – 8.
- ԲՀՊՏ-ներում մոնիթորինգի և կադաստրի վարման մեթոդաբանությունը – 10.
- Էկոզբոսաշրջությունը ԲՀՊՏ-ներում – 7.
- Բնական պաշարների կառավարման և պահպանության բնագավառում Հայաստանի գործողությունների ազգային ծրագրերը – 1.
- Էկոլոգիական իրազեկման մեթոդական հիմունքները – 1:

4. **Ո՞ր թեմաներով կցանկանաիք խորացված դասընթացներ անցնել.**
   - Բոլոր թեմաները – 5.
   - ՀՀ բնապահպանական օրենսդրությունը – 8.
   - Հայաստանի բույսերի և կենդանիների Կարմիր գրքերը – 13.
   - ԲՀՊՏ-ներում մոնիթորինգի և կադաստրի վարման մեթոդաբանությունը – 1.
   - Էկոզբոսաշրջությունը ԲՀՊՏ-ներում – 6.
   - Էկոլոգիական իրազեկման մեթոդական հիմունքները – 8.
   - Արգելոցների, ազգային պարկերի և արգելավայրերի մասին – 2:

Քաջարանի քաղաքապետ Վ.Գևորգյանի և քաջարանի թիվ 2 դպրոցի տնօրենի խնդրանքով բարձր դասարանների աշակերտների և ուսուցչական կազմի համար 2012 թ. ապրիլի 18-ին Ս.Բալոյանը հանդես եկավ <<Հայաստանի բնական և մշակութային ժառանգությունը>> թեմայով զեկուցմամբ (լուսանկարները կցվում են):

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Ց Ց

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ Ք.ՔԱՋԱՐԱՆ, ԼԵՌՆԱՁՈՐ, ԳԵՂԻ, ՇԻԿԱՀՈՂ, ՍՐԱՇԵՆ ԵՎ ԾԱՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ

ՇԻԿԱՀՈՂ 16-17.04.2012 ՔԱՋԱՐԱՆ 19-20.04.2012

1-ԻՆ ՕՐ

Հ/Հ	ԹԵՄԱՆԵՐ	ԵՆԹԱԹԵՄԱՆԵՐ	ԺԱՄԵՐ	ԴԱՍԱԽՈՍ
1	**ՀՀ բնապահպանական օրենսդրությունը**	1) ՀՀ Սահմանադրությունը	10:00-10:15	ԱԼԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
		2) Միջազգային պայմանագրերի ընդհանուր բնութագիրը	10:15-10:30	
		3) Բնապահպանության ոլորտում Հայաստանի կողմից վավերացված միջազգային պայմանագրերը	10:30-11:00	
ԸՆԴՄԻՋՈՒՄ			**11:00-11:15**	
2	**ԲՀՊՏ-ների կառավարման պլանների մշակման սկզբունքները**	1) Կառավարման պլանի հասկացությունը	11:15-11:25	ՍԱՄՎԵԼ ԲԱԼՈՅԱՆ
		2) Կառավարման պլանի մշակման չափորոշիչները և իրավական հիմքը	11:25-11:40	
		3) Կառավարման պլանի մշակման մեթոդաբանությունը	11:40-12:00	
		4) Կառավարման պլանի կառուցվածքը և իրականացման մոնիթորինգը	12:00-12:15	
ՃԱՇԻ ԸՆԴՄԻՋՈՒՄ			**12:15-13:30**	
3	**ԲՀՊՏ-ներում մոնիթորինգի վարման մեթոդաբանությունը**	1) Ընդհանուր դրույթներ մոնիթորինգի վերաբերյալ	13:30-13:50	ԷԴԻԿ ՈՍԿԱՆՅԱՆ
		2) ԲՀՊՏ-ներում մոնիթորինգի իրականացման իրավական հիմքը	13:50-14:10	
ԸՆԴՄԻՋՈՒՄ			**14:10-14:20**	
4	**Էկոզբոսաշրջությունը ԲՀՊՏ-ներում**	1) Էկոզբոսաշրջության սահմանումը և ռեսուրսները	14:20-14:45	

		2) Էկոզբոսաշրջության պլանավորումը ԲՀՊՏ-ներում և ենթակառուցվածքները	14:45-15:10	ՌՈՒԲԻԿ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ
ԸՆԴՄԻՋՈՒՄ			**15:10-15:15**	
5	**Բնական պաշարների կառավարման և պահպանության բնագավառում Հայաստանի գործողությունների ազգային ծրագրերը**	1) Գործողությունների ազգային ծրագրերի դերը Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում	15:15-15:30	ԳԵՎՈՐԳ ՄԻՐԶՈՅԱՆ
		2) ԲՀՊՏ-ներին առնչվող գործողությունների ազգային ծրագրերը	15:30-16:00	
		3) Բնապահպանական ծրագրերի և ծրագրային հայտերի մշակման սկզբունքները	16:00-16:30	
Դասընթացների 1-ին օրվա ամփոփում			**16:30-17:00**	

2-ՐԴ ՕՐ

Հ/Հ	ԹԵՄԱՆԵՐ	ԵՆԹԱԹԵՄԱՆԵՐ	ԺԱՄԵՐ	ԴԱՍԱԽՈՍ
1	**ՀՀ բնապահպանական օրենսդրությունը**	1) Բնապահպանության ոլորտի ՀՀ օրենքները	10:00-10:10	ԱԼԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
		2) <<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>> ՀՀ օրենքը	10:10-10:30	
		3) Բնապահպանական օրենսդրության խախտման համար իրավական պատասխանատվությունը	10:30-11:00	
ԸՆԴՄԻՋՈՒՄ			**11:00-11:15**	
2	**ԲՀՊՏ-ներում կադաստրի վարման մեթոդաբանությունը**	1) Ընդհանուր դրույթներ կադաստրի վերաբերյալ	11:15-11:30	ԷԴԻԿ ՈՍԿԱՆՅԱՆ
		2) ԲՀՊՏ-ներում կադաստրի իրականացման իրավական հիմքը	11:30-11:50	
3	**Էկոզբոսաշրջությունը ԲՀՊՏ-ներում**	1) Էկոզբոսաշրջության պոտենցիալ օգուտները	11:50-12:10	ՌՈՒԲԻԿ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ
		2) Էկոզբոսաշրջության ռիսկերը և դրանց	12:10-12:30	

		մեղմացման միջոցները		
ՃԱՇԻ ԸՆԴՄԻՋՈՒՄ			**12:30-14:00**	
4	**Էկոլոգիական իրազեկման մեթոդական հիմունքները**	1) Էկոլոգիական կրթություն և էկոլոգիական իրազեկում, ընդհանուր բնութագրերը և տարբերությունները	14:00-14:20	ԳԵՎՈՐԳ ՄԻՐԶՈՅԱՆ
		2) Էկոլոգիական իրազեկման նպատակը, խնդիրները և պատասխանատուները	14:20-14:40	
		3) Էկոլոգիական իրազեկման մեթոդաբանությունը	14:40-15:00	
ԸՆԴՄԻՋՈՒՄ			**15:00-15:10**	
5	**Հայաստանի բույսերի և կենդանիների Կարմիր գրքերը**	1) Կարմիր գիրք հասկացությունը և դրա կազմման իրավական հիմքը	15:10-15:20	ՍԱՄՎԵԼ ԲԱԼՈՅԱՆ
		2) Կարմիր գրքի կազմման չափորոշիչները	15:20- 15:35	
		3) ՀՀ Բույսերի Կարմիր գիրքը	15:35-16:00	
		4) ՀՀ Կենդանիների Կարմիր գիրքը	16:00-16:30	
Դասընթացների 2-րդ օրվա ամփոփում			**16:30-17:00**	

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ

h/h	Անուն, ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը
1	Սամվել Առաքելյան	Ավագանու անդամ
2	Գարեգին Գաբրիելյան	Աշխատակազմի գլխավոր մասնագետ
3	Սպարտակ Ստեփանյան	Թիվ 1 դպրոցի փոխտնօրեն
4	Ալեն Առաքելյան	Աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ
5	Աննա Սողոմոնյան	Աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ
6	Աննա Ստեփանյան	Աշխատակազմի մասնագետ
7	Գառնիկ Հակոբյան	<<Կոմունալ տնտեսություն>> ՓԲԸ-ի բաժնի պետ
8	Արմինե Արզումանյան	Թիվ 2 դպրոցի ուսուցչուհի

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ԼԵՌՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ

h/h	Անուն, ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը
1	Ստեփան Պետրոսյան	Համայնքի ղեկավար
2	Աիդա Ղուկասյան	Համայնքի ղեկավարի տեղակալ
3	Մելանյա Թևանյան	Համայնքի հաշվապահ
4	Բելլա Ղազարյան	Գործավար
5	Լուսինե Առաքելյան	Համակարգչային օպերատոր
6	Ասյա Ստեփանյան	Գրադարանավար

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ

h/h	Անուն, ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը
1	Արքայիկ Մովսիսյան	Համայնքի ղեկավարի տեղակալ
2	Ռուզաննա Կարապետյան	Գրադարանավար
3	Անուշ Առաքելյան	Դպրոցի ուսմասվար
4	Լյուդմիլա Դավթյան	Ավագանի
5	Էմմա Գասպարյան	Ակումբավար
6	Ռոբերտ Առաքելյան	Տնտեսվար
13		

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ԾԱՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ

h/h	Անուն, ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը
1	Արարատ Մուրադյան	Համայնքի ղեկավար
2	Սպարտակ Ավետիսյան	Համայնքի բնակիչ
3	Անդրանիկ Աբելյան	Ուսուցիչ
4	Մելինե Հարությունյան	Համայնքի բնակիչ
5	Ազապի Վարդանյան	Դպրոցի տնօրեն
6	Մարո Թեյմուրազյան	Ուսուցիչ
7	Հունան Գրիգորյան	Հաշվապահ
8	Լիլիթ Մարտիրոսյան	Գյուղապետարանի քարտուղար
9	Քնար Քարամյան	Ավագանի
10	Սմբատ Նահապետյան	ավագանի

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՇԻԿԱՀՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ

h/h	Անուն, ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը
1	Գեղամ Ղազարյան	Համայնքի ղեկավար
2	Դավիթ Հարությունյան	Համայնքի բնակիչ
3	Հերիքնազ Խաչատրյան	Հաշվապահ
4	Անահիտ Գևորգյան	Գյուղապետարանի քարտուղար
5	Գարիկ Մինասյան	Համայնքի բնակիչ
6	Նարինե Առաքելյան	Համայնքի բնակիչ

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՍՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ

h/h	Անուն, ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը
1	Գրենյա Աղաբեկյան	Համայնքի ղեկավար
2	Լիանա Մկրտչյան	Ուսուցչուհի
3	Սիլվա Համբարձումյան	Ուսուցչուհի
4	Նարեկ Հարությունյան	Համայնքի բնակիչ
5	Թևան Հարությունյան	Համայնքի բնակիչ
6	Նարեկ Աղաբեկյան	Ուսուցիչ

ՀԱՎԵԼՎԱԾ 3

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

Դասախոսական կազմը

Դասընթացները Շիկահող, Սրաշեն և Ծավ համայնքների համար

Դասընթացները Քաջարան, Լեռնաձոր և Գեղի համայնքների համար

Հանդիպում ք.Քաջարանի թիվ 2 դպրոցում